

ԲԱՆԱՎԵՆ ԵՎ ՔԱՆԱՐԿՈՒՄ

ՃՈՅ

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԵՐՈ ՉԻՆ ՀԱՅԵՐԵՍԻ ԲՈՒՆ ԵՎ ԱՐԳԵԼԱԿԱՆ
ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵՋ

Ս. Ռ. ԱՎԵՏՅԱՆ

Ինչպես գիտենք, գրաբարում արգելական հրամայականը կազմվում էր ներկայի հիմքից, իսկ բուն հրամայականը՝ անցյալ կատարյալի հիմքից, և ըստ այդմ նրանք նախապես միմյանցից անկախ կազմություններ էին ներկայացնում: Սակայն գրաբարում առկա էին բուն հրամայականի կազմության ընդհանուր օրինաչափություններից բացառություններ ու շեղումներ, որոնք, մեր կարծիքով, հետագայում կարեղոր նախադրյալներ են ծառայել բուն հրամայականի ձևերի համարանական փոփոխությունների և դրանով իսկ՝ բուն և արգելական հրամայականների փոփոխարարերության փոփոխության հարցում: Հարկ է նշել, որ համարանությունն ընդհանրապես բավական մեծ դեր է խաղում լեզուների թերականական ձևերի պատճական զարգացման մեջ: Այսպես, լատ. *traducere* «*լուղափոխել, բարգմանել*» բայի ներկայի եզակի առաջին դեմքի *traduco* ձևը խապաներենում օրինաշափ կերպով պետք է տար **tradugo*, ճիշտ ինչպես լատ. *dicere* «*ասել*» բայի համապատասխան *dico* «*ասում եմ*» ձևը տվել է խապ. *digo* «*ասում եմ*»: Մինչդեռ խապաներենում *tradugo* ձևի փոխարեն առկա է *traduzco* «*բարգմանում եմ*» բայաձև: Վերջինս առաջացել է լատ. *cognoscere* «*իմանալ, ծանորանար*» բայի *cognosco* «*իմանում եմ*» ձևից ծագած խապ. *conozco* «*իմանում եմ*» ձևի համարանությամբ այն բանի շնորհիվ, որ լատ. *cognoscere* բայի ներկայի եզակի II և III դեմքերի *cognoscis*, *cognoscit* ձևերի և լատ. *traducere* բայի *traducis*, *traducit* ձևերի *-sci* և *-ci* հնչյունակապակցությունները խապաներենում տվել են նույն արդյունքը (հմտ. լատ. *scientia* > խապ. *ciencia* «*գիտություն*» և լատ. *civitatem*> խապ. *ciudad* «*քաղաք*»): Ըստ այդմ խապ. *conozco-conoces*, *conoce* ձևերի փոփոխարարերությանը համապատասխան, խապ. *tradiciones*, *traduce* ձևերից համարանությամբ կազմվել է *traduzco* ներկայի եզակի I դեմքի ձև (փոխ. օրինաշափ* *tradugo-* ի):

Այդպես էլ համարանական ծագում ունեն ոչ միայն խապ. *plazco, yazco* և *-ecer*-ով կամ *-ucir*-ով վերջացող բայերի ներկայի եզակի I դեմքի ձևերը, այլև *venir, tener, poner* բայերի *vengo, tengo, pongo* և այլն ձևերը²:

Համարանությամբ է բացատրվում նաև այն հանգամանքը, որ պահլավերենից փոխառյալ պիլ. *vagr* > գլար. *վազր* կամ ին հունարենից փոխառյալ

¹ Տե՛ս **М. В. Сергиевский**, Введение в романское языкознание, М., 1952, էջ 196-197:

² Տե՛ս նոյս տեղը, էջ 196-197, 137, 146, **Э. Бурсье**, Основы романского языкоznания, М., 1952, էջ 43, 48, 183:

հուն. *θεατρον* > գրաք. **թագոր** բառերը ծևով համընկնելով գրաքար բնիկ դուսպր, փայզը և այլն բառերին՝ *դուսպր-դագեր* հոլովման տիպի համարանությամբ գրաքարում ներքին թերման են ենթարկվել՝ **վագր-վագեր**, **թագոր-թագեր** և այլն: Նմանապես գրաքարյան **հարցանել** պարզ ներգործական բայից օրինաշափ կերպով ծագած ժամանակակից հայերենի **հարցանել** բայը ծևով համընկնելով գրաքարյան **հասուցանել**, **թարշրացուցանել** և այլն պատճառական բայերից ծագող ժամանակակից հայերենի **հասցնել**, **թարշրացնել** ծևերին՝ նրանց նման ունենում է անցյալ կատարյալի բեական հիմք: Այդպես էլ, կարծում ենք, համարանությամբ պետք է բացատրել այժմ խոսակցական լեզվում հաճախ հանդիպող և գրական նորմայից շեղվող **բռնել**, **փախնել** և այլն ծևերի ծագումը: Ինչպես գիտենք, ներկայի հիմքում չև և ածանցներ ունեցող բայերը անցյալ կատարյալի հիմքում ծևով համընկնում են՝ **գրնել-գր**, **հասնել-հաս**, **բռչել-բռ**, **փախչել-փախ**: Ըստ այդմ **գրնել-գրա**, **գրի՛ր** և այլն ծևերի փոխհարաբերությանը համապատասխան **բռաւ-բռի՛ր**, **փախաւ-փախի՛ր** և այլն ծևերի համար համարանությամբ կազմվել են **բռնել**, **փախնել** և այլն ծևեր: Կարելի է տարբեր լեզուներից քերականական ծևերի համարանական փոփոխության բազմաթիվ ուրիշ օրինակներ քերել բայց, կարծում ենք, այսքանն էլ բավական է համարանական փոփոխությունների ընդհանուր սկզբունքը պարզելու համար, որը հետևյալն է: **Եթե այս կամ այն քերականական հարցույցի որևէ անդամը չևով համընկնում է մեկ այլ հարցույցի որևէ անդամին, ապա հաճախ երկու հարցույցների մյուս անդամները նույնպես չկարում են չևով համապեկ միմյանց:** Ինարկե, միևնույն ժամանակ պետք է նկատի ունենալ, որ քերականական ծևերի համարանական փոփոխության հարցում հնարավոր չէ նույնպիսի հետևողականություն ակնկալել, ինչպիսին առկա է «հնչյունական օրենքների» դեպքում, որովհետև համարանական փոփոխությունը միշտ չէ, որ տարածվում է համանման պայմաններում գտնվող բոլոր դեպքերի վրա: Լատիներեն վերոհիշյալ *dicere* և *traducere* բայերի եզակի I դեմքի ծևի տարբեր զարգացումները խապաներենում դրա վառ ապացույցն են:

Այդուհամդերձ, համարանությունը, որպես կանոն, քերականական ծևերը ընդհանրացնող ու միօրինակացնող լեզվական կարևոր գործուն է: Կարծում ենք՝ համարանությունը մեծ դեր է խաղացել նաև հայոց լեզվի պատմական զարգացման ընթացքում մի կողմից բուն հրամայականի ծևերի փոփոխության, մյուս կողմից՝ բուն և արգելական հրամայականների փոփոխաբերության փոփոխության հարցում, որը մենք կփորձենք դիտարկել ըստ փոփոխությունների ժամանակագրական հաջորդականության: Դեռևս Ա. Այտընյանը ցույց է տվել, որ բուն հրամայականի գրաք.-այր, -արուր վերջավորությունները -էր վերջավորությամբ փոխարինելու առաջին օրինակները հասնում են մինչև V դ., օրինակ՝ **փարէ՛ր** (Փարպեցու մոտ), իսկ VI, VII դարերից սկսած՝ այդ կարգի ծևերն ավելի հաճախ են հանդիպում. հմնտ. **կերէ՛ր**, **փարէ՛ր**, **դարչէ՛ր**, **իմացէ՛ր** և այլն³: Միաժամանակ Այտընյանը VII դարի համար մատնանշում է մեկ այլ կարևոր փոփոխություն՝ գրաքարյան **և** լծորդության **ան** ածանցավոր որոշ բայերի՝ **ի**

³ Տե՛ս Ա. Այտընյան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Եր., 1987, Ներած., էջ 93, Քեր., էջ 71:

լծորդության անցնելը, ինչպես **հասանել> հասնիլ** և ըստ այդմ՝ անց. կատ. **հասայ, հասար...**, բուն հրամ. **հասիր** (փոխ. գրաք. **հասի, հասնր...**, **հան** ձևերի)⁴: Միջին հայերենի վաղ շրջանում՝ XII-XIV դդ., **ա** լծորդության ածանցավոր բայերի կրավորակերպ - **այր**, - **արուր** հրամայականի վերջավորությունները փոխարինված են - **էր** վերջավորությամբ, իսկ **ե** լծորդության **ան** ածանցավոր բայերի՝ կրավորակերպ - **իր** վերջավորությամբ հրամայականի **զիիր**, **հասիր** և այլն ձևերը հանդես են գալիս դեռևս որպես զուգահեռ ձևեր արմատական **զիկ**, **հան** և այլն ձևերի հետ միասին⁵: Կարծում ենք՝ բուն հրամայականի ձևերի վերոհիշյալ երկու փոփոխություններն են առաջացել են համարանորյամբ, որի համար դեռևս գրաբարում կային հետևյալ նախադրյալները.

1. Ինչպես գիտենք, գրաբարում **ուղել** բայից բուն հրամայականի ձևերը լինում էին **կեր-կերայր**, **ունել** (իմ) բայից՝ **կար-կարայր**, **կալարուր**, **դանել** (իմ) բայից՝ **դար**, **դարայր**: Դրանց առանձնահատկությունն այն էր, որ հրամայականի եզակի թվի կազմությամբ համապատասխանում էին ներգործած խոնարհման հրամայականի արմատական ձևերին՝ **հասանել-հան**, **բերել-բեր**, **բողով-բոն** և այլն, մինչդեռ հոգևակի թվում համապատասխանում էին կրավորած խոնարհման **ուսանիմ-ուսայր**, **ուսարուր**, **ջեռնում-ջեռայր**, **ջեռարուր** և այլն ձևերին: Ըստ այդմ՝ եզակի թվի ընդհանրության շնորհիվ, **հան-հասէր**, **բեր-բերէր** և այլն ձևերի փոխարարերությանը համապատասխան, գրաբարյան վերոհիշյալ **կան**, **դար**, **կեր** եզակի թվի ձևերի համար համարանորյամբ կազմվել են **կալէր**, **դարէր**, **կերէր** հոգևակի թվի ձևեր:

2. Փաստերը ցույց են տալիս, որ դեռևս գրաբարում **ա** լծորդության պարզ և ածանցավոր բայերի փոխազդեցության հետևանքով առաջացել էին ընդհանուր օրինաչափությունից շեղվող համարանական ձևեր: Այսպես, **ա** լծորդության մի շարք բայեր, անկախ սերից, անցյալ կատարյալի հիմքից կազմվող ձևերում գրաբարում խոնարհվում էին և ներգործած, և կրավորած, օրինակ՝ **հոգա-հոգացայ-հոգացի**, բուն հրամ. **հոգացիր**, **հոգաւ**⁶, (**որսալ-որսացի**, **որսացայ**, **որսաւ**, **որսացիր**)⁷, **ջանալ-ջանացայ**, **ջանացի**, **ջանացիր**, **ջանաւ**⁸ և այլն: Մյուս կողմից՝ **ա** լծորդության մի քանի ածանցավոր բայեր անցյալ կատարյալի հիմքից կազմվող ձևերում խոնարհվում էին ներգործած, օրինակ՝ **լուսանալ-լուսացի**, **լուսաւ**⁹, **բանալ - բացի**, **բաց**¹⁰ և այլն: Եվ վերջապես **մոռանալ**, **ընթանալ**, **իմանալ** բայերը բուն հրամայականի եզակի II դեմքում **մոռացիր**, **ընթացիր**, **իմացիր** կանոնավոր ձևերից բացի ունենում էին նաև **մոռաւ**, **ընթաց**, **իմաւ**, **իմաց**¹¹:

⁴ Տե՛ս նույն տեղը, Քեր., էջ 70:

⁵ Տե՛ս «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», հ. I, Եր., 1972, էջ 336-337:

⁶ Տե՛ս Ո. Ղազարյան, Գրաբարի բառարան, հ. II, Եր., 2000, էջ 79:

⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 350:

⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 427:

⁹ Տե՛ս նույն տեղը, հ. I, էջ 537:

¹⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 255:

¹¹ Տե՛ս նույն տեղը, հ. I, էջ 466, 509, հ. II, էջ 202:

Ինչպես տեսնում ենք, վերոհիշյալ օրինակներում մի դեպքության պարզ բայերն են խոնարիվել ածանցավորմների հետևողությամբ, մյուս դեպքում՝ ընդհակառակը: Ըստ Երևույթին, այդ կարգի համարական փոխանցումների համար հիմք է ծառայել **ալծորդության** պարզ և ածանցավոր բայերի անցյալ կատարյալի հիմքերի ձևով համընկնելը. հմնտ. **հսաղադիսաց, իմանալ-իմաց** և այլն: Ինչպես նշել ենք, միջին հայերենի շրջանում բուն հրամայականի կարևոր փոփոխություններից մեկն էլ գրաբարյան **և լծորդության աև ածանցավոր բայերի դեպքում հրամայականի արմատական ձևերին զուգահեռ կրավորակերպ -իր վերջավորությամբ ձևերի գործածությունն է:** Այդ երևույթը պայմանավորված է այն հանգամանքով, որ գրաբարյան նշված տիպի բայերից չորսը՝ **զբանել, գեսանել, իջանել, մկանել**, միջին հայերենում բայական փոխանցման են ենթարկվել և հանդիս են գալիս **ու լծորդության ածանցավոր բայերի խոնարհմամբ**¹², իսկ գրաբարյան մի շարք բայեր էլ՝ **հսաղանել, անցանել** և այլն, խոնարիվում են **ի լծորդության ածանցավոր բայերի նման**: Այդ բայական փոխանցումներին պետք է նպաստեր ոչ միայն դեռևս գրաբարից եկող համանման երևույթների առկայությունը լեզվում¹³, այլ նաև այն հանգամանքը, որ գրաբարյան **ի լծորդության բայերը, ետղասական շրջանից սկսած, հանդիս էին գալիս թե՝ -ել և թե՝ -իր վերջավորությամբ**¹⁴: XII - XIV դր. բուն հրամայականի ձևերում տեղի ունեցած փոփոխություններից հարկ է նշել նաև այն, որ **և լծորդության պարզ բայերի եզակի հրամայականի ձևը ավելի հաճախ հանդիս է գալիս եւ > է հնչունափոխված վերջավորությամբ, ինչպես՝ պարզէ, արջակէ և այլն**¹⁵, իսկ պատճառական բայերի եզակի հրամայականում գրաբարյան -ու վերջավորությամբ ձևերին զուգահեռ հանդիս են գալիս հան -ուր վերջավորությամբ նոր ձևեր՝ **զօրացուր, ցամարեցուր** և այլն¹⁶: Կարծում ենք, այս դեպքում նախ խաղա-խաղացէք, արջակէ արջակեցէք ձևերի փոխարարելությանը համապատասխան, հոգնակի թվի **զօրացուցէք, ցամարեցուցէք** ձևերի համար համարանք կազմվել են ***զօրացու, ցամարեցու** (փոխ. **զօրացն, ցամարեցն**) և այլն ձևեր, այնուհետև **հասիր, զիիր, զիր, ցուր** և այլն **բ-ուր** վերջացող հրամայականի ձևերի հետևողությամբ պատճառական բայերի հրամայականի ձևերը ևս -ու վերջնահնչյուն են ստացել՝ **զօրացուր, ցամարեցուր** և այլն: Ինչ վերաբերում է արգելական հրամայականին, ապա պետք է նշել, որ մի կրողմից՝ դրա կազմության գրաբարյան տիպը պահպանվում է, մյուս կրողմից՝ միջին հայերենում հանդիս են գալիս արգելական հրամայականի նոր ձևեր՝ կազմված **մի՛ արգելական մասնիկի** և անորոշ դերբայի հարադրությամբ, ինչպես **մի՛ բարկանալ, մի՛ սիրել, մի՛ խորիլ**: Ընդ որում, վերջին տիպի հոգնակիի

¹² Տե՛ս «Ակնարկներ...», էջ 301:

¹³ Տե՛ս Հ. Մ. Ավետիսյան, Ռ. Ս. Ղազարյան, Գրաբարի ձեռնարկ, Եր., 2003, էջ 12, Վ. Համբարձումյան, Գրաբարի ձեռնարկ, Եր., 2004, էջ 96:

¹⁴ Տե՛ս «Ակնարկներ...», էջ 302 :

¹⁵ Տե՛ս նոյն տեղը, էջ 336-337:

¹⁶ Տե՛ս նոյն տեղը, էջ 339:

* Նկատի ունենալով, որ միջին հայերենում բառավերջում / հնչյունն այլև չերարտասանվում, այետք է լընդունել, որ գրաբարյան երկրարքառակերպ է (եյ) - և լիդին հայերենում սիրէ, արծակէ և այլն ձևերում արտասանվում եր որպես և ձայնավոր:

համապատասխան ձևեր այդ շրջանում դեռևս գոյություն չունեն¹⁷: Ինչպես տեսնում ենք, թեև XII - XIV դդ. բուն հրամայականի կազմության գրաբարյան օրինաչափությունները որոշակի փոփոխությունների են ենթարկվել սակայն բուն և արգելական հրամայականների փոփոխարաբերությունը դեռևս շարունակում է մնալ նույնը: Վերջինիս հետագա փոփոխության համար կարևոր նախադրյալներ են ստեղծվում միջին հայերենի ավելի ուշ շրջանում՝ XV - XVII դդ.: Նշված ժամանակահատվածում տեղի են ունեցել քննարկվող հարցի տեսակետից կարևոր հետևյալ փոփոխությունները.

1. Ե լծորդության պարզ բայերի դեպքում օրինաչափ հճյունափոխությամբ առաջացած **ես** > **է** բուն հրամայականի եզակի վերջավորությունը տարածվել է նաև **ի** լծորդության պարզ բայերի վրա: Միաժամանակ **ե** և **ի** լծորդության պարզ բայերի եզակի հրամայականի ձևերը զուգահեռաբար հանդես են գալիս նաև -**իր** վերջավորությամբ՝ հետևիք՝ խօսիք և այլն¹⁸:

2. Ե լծորդության պարզ բայերում, ի տարբերություն նախորդ ենթաշրջանի, առավել շատ են օգտագործվում հոգնակի հրամայականի արմատական-հիմքային (ոչ ցոյական) ձևերը, ինչպես **կանչէր**, **պահէր** և այլն¹⁹:

Կարծում ենք՝ այս նոր ձևերը ևս առաջացել են համարանությամբ, որի համար հիմք կարող էին ծառայել գրաբ. **բերել**, **ածել**, **հանել** պարզ բայերը, որոնք ունենում էին անցյալ կատարյալի արմատական հիմք: Հատ այլմ **բերել-բերէր**, **հանել-հանէր** ձևերի փոփոխարաբերությանը համապատասխան **սիրել**, **գրել** և այլն բայերից հեշտությամբ կարող էին կազմվել **սիրէր**, **գրէր** և այլն համարանական ձևեր: Համարանական նշված փոփոխության հակառակ երևույթն է ներկայացնում նույն շրջանում **հանել** բայից զուգահեռաբար գործածվող ցոյական հիմքով անցյալ կատարյալը, օրինակ՝ **հանեցին**²⁰: Բացի այդ, մեր կարծիքով, բուն հրամայականի հոգնակի -**էր-եցէր** արմատական և ցոյական տիպերի համարանական փոխազդեցությանը պետք է նպաստեր նաև դեռևս գրաբարից եկող **դպրածեմ-դպրածանեմ**, **օծեմ-օծանեմ** և այլն պարզ և ածանցավոր զուգահեռ տարբերակներից գոյությունը լեզվում՝ **դպրածեցէր-դպրածէր**, **օծեցէր-օծէր** հրամայականի հոգնակի գուգահեռ ձևերով: Ծիշտ է, հետագայում այդ ածանցավոր բայերից շատերը իրենց տեղը զիջում են ածանցազուրկ տարբերակներին, իսկ գրաբարյան շատ ածանցավոր բայերից էլ երկրորդաբար կազմվում են ածանցազուրկ ձևեր²¹, սակայն անցյալ կատարյալի արմատական հիմքով ձևերը ցոյական ձևերով փոխարինելու գործընթացում որոշ ժամանակ, անշուշտ, զուգահեռաբար պետք է գործառեին **դպրածեցէր-դպրածէր** և այլն ցոյական և արմատական հիմքերով տարբերակները:

Մյուս կողմից՝ հնարավոր է, որ **ե** լծորդության պարզ բայերի բուն հրամայականի հոգնակի արմատական հիմքով ձևերն էլ հենց նպաստել են, որ **գպիր-գպէր**, **հասիր-հասէր** ձևերի համարանությամբ եզակի -**իր**

¹⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 357-358:

¹⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 389-390 :

¹⁹ Տե՛ս նույն տեղը:

²⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 387:

* Ընդ որում, Ա. Այտրենյանը ցույց է տալիս, որ այդ երևույթի առաջին վկայությունները հասնում են մինչև V դ., ինչպես՝ **սպանեցէր** (փոխ. **սպանէր**): Տե՛ս Ա. Այտրենյան, նշվ. աշխ., Ներած., էջ 92-93:

Վերջավորությունը տարածվի նաև **և** լծորդության պարզ (իսկ այնուհետև՝ **ի** լծորդության պարզ) բայերի վրա, ինչպես՝ **սիրին-սիրէք** և այլն: Գալով արգելական հրամայականի կազմությանը, պետք է նշել, որ XV - XVII դդ. նույնպես մի կողմից պահպանվում են գրաքարյան օրինաչափությունները, մյուս կողմից՝ զուգահեռաբար կիրառվում են **մի՛ արգելական մասնիկով** և անորոշ դերքայով կազմված ձևեր: Ընդ որում, եզակի թվի **մի՛ բռնել, մի՛ բռդուլ** և այլն ձևերից բացի արդեն հանդիպում են նաև հոգնակի համապատասխան ձևեր՝ **մի՛ ուրիշ, ասիլ մի՛ բ** և այլն (մասնավորապես Նադաշ Հովնարանի և Զաքարիա Ագուլեցու մոտ)²¹:

Միաժամանակ կուգենայինը նշել այս ենթաշրջանին բնորոշ մի կարևոր փոփոխություն ևս. ի տարբերություն XV - XIV դդ., որտեղ անորոշ դերքայով հարադրված արգելական հրամայականի ձևում **և** լծորդության բայերի - **ել** վերջավորությունը - **իլ**-ով փոխարինվում էր ըստ անհրաժեշտության կրավորական սեռի կամ կրավորակերպ չեզոքի իմաստ արտահայտելու համար, XV - XVII դդ. **և** լծորդության բայերը, առանց կերպային տարբերության, հանդես են գալիս թե՛ - **ել** և թե՛ - **իլ** վերջավորություններով. հմնտ. **մի՛ բռնել**, բայց նաև՝ **սիրպրս մի՛ բռնդիլ** և այլն²²: Ընդ որում, այդ երևոյթի բուն էությունը հասկանալի է դառնում նշված երկու ենթաշրջաններում անորոշ դերքայի մյուս կիրառությունները ևս նկատի ունենալու դեպքում: Այսպես, XII - XIV դդ., որպես կանոն, **և** լծորդության բայերը թե՛ անորոշ դերքայում և թե՛ դրանով հարադրված ժխտական ձևերում ունեն - **ել** վերջավորություն (քնականարար ոչ կրավորական սեռի իմաստով կիրառվելիս), ինչպես՝ **չէր ի ճաշակել, չէ ի կարել** և այլն²³: Մինչդեռ XV - XVII դդ. **և** լծորդության բայերը անորոշ դերքայի համար պահպանում են - **ել** վերջավորությունը, իսկ անորոշ դերքայով հարադրված ժխտական ձևերում, առանց կերպային տարբերության, զուգահեռաբար հանդես են գալիս - **ել** և - **իլ** վերջավորությունները, ինչպես՝ **չի կարել, չեմ կարիլ, չես ղոկել, չի զոկել** և այլն²⁴: Կարծում ենք, անորոշ դերքայով հարադրված ժխտական ձևերում նշված - **ել/-իլ** զուգաձևությունը չի կարող բացատրվել **ի** լծորդության բայերի ազդեցությամբ (թեև այլ դեպքերում, ինչպես տեսանք, **և** և **ի** լծորդության բայերը փոխազդել են միմյանց վրա), այլ առաջացել է **ել > իլ** հնչյունական փոփոխությամբ: Մասնավորապես այդպես ենք գտնում հետևյալ նկատառումներով.

1. Եթե - **ել/-իլ** զուգաձևությունը ի լծորդության ազդեցությամբ առաջացած լիներ, այն առկա կիներ նաև անորոշ դերքայի ոչ ժխտական ձևում: Մինչդեռ այդ դեպքում կանոնավոր կերպով առկա է - **ել** վերջավորություն:

2. XV - XVII դդ. **ի** լծորդության բայերը, ի տարբերություն նախորդ ենթաշրջանի, թե՛ անորոշ դերքայում և թե՛ դրանով հարադրված ժխտական ձևերում կանոնավոր կերպով ունեն - **իլ** վերջավորություն, ինչպես՝ **ծիծաղիլ, հայիլ, չի դարիլ, չի բռւնիլ** և այլն: Այլ կերպ ասած՝ նախորդ

²¹ Տե՛ս նոյն տեղը, էջ 405-406:

²² Տե՛ս նոյն տեղը, էջ 358-359, 405-406:

²³ Տե՛ս նոյն տեղը, էջ 317:

²⁴ Տե՛ս նոյն տեղը, էջ 361-362:

Ենթաշրջանին բնորոշ -հի-իլ գուգածնությունն այս ենթաշրջանում վերացել է²⁵:

3. Ինչպես զիտենք, լեզվի հետագա զարգացման ընթացքում և լծորդության բայերի անորոշ դերայով հարադրված ժխտական կազմություններում կայունացել է -իլ վերջավորությամբ տարրերակը. հմնտ. մի կողմից ժամանակակից հայերենի ժխտական դերայի ծագումը՝ չեմ գրիլ > չեմ գրի, չեմ սիրիլ > չեմ սիրի, մյուս կողմից՝ մի՛ սիրիլ մի՛ սիրի, մի՛ գրիլ, մի՛ գրի և այլն բարբառային և ժողովրդախոսակցական արգելական հրամայականի ձևերը: Ուստի նկատի ունենալով, որ վերոհիշյալ ժխտական ձևերում մի դեպքում շեշտը ընկել է օժանդակ բայի ժխտական ձևի վրա, մյուս դեպքում՝ մի՛ արգելական մասնիկի վրա, կարծում ենք, անորոշ դերայի շեշտագորոկ -իլ վերջավորությունը գուտ հնչյունական-արտասանական պատճառներով դարձել է -իլ:

Հայերենի հետագա զարգացման ընթացքում բուն և արգելական հրամայականների ձևերը արևմտահայ գրական լեզվում էական փոփոխությունների շնորհական այլ ընդհանուր առմամբ վերացել են միջին հայերենին բնորոշ գուգածնությունները կամ զոնե դրանց քանակը կրծատվել է: Այսպես, և և ի լծորդության պարզ բայերի բուն հրամայականի եզակի թվում կայունացել է -է վերջավորությամբ ձևը, իսկ հոգնակի թվում՝ ցոյական հիմքով տարրերակը, իսկ և և ի լծորդության ածանցավոր բայերի դեպքում անցյալ կատարյալի արմատական հիմքին եզակի թվում ավելանում է -իր վերջավորությունը, հոգնակի թվում՝ -էր վերջավորությունը: Ա լծորդության պարզ և ածանցավոր բայերի միջին հայերենի օրինաչափությունները ևս նույնությամբ պահպանվել են: Պատճառական բայերի եզակի թվում կայունացել է միջին հայերենի -ուր վերջավորությամբ նոր ձևը, իսկ հոգնակի թվի ձևը պահպանվել է նույնությամբ. հմնտ. լսել-լսէ՛, լսեցէ՛ք, սորվիլ-սորվէ՛, սորվեցէ՛ք, կարդալ-կարդա՛, կարդացէ՛ք, իմանալ-իմացի՛ք, իմացէ՛ք, գրնել-գրի՛ք, գրէ՛ք, հասնիլ-հասի՛ք, հասէ՛ք, յոգնեցնել-յոգնեցու՛ք, յոգնեցուցէ՛ք և այլն²⁶:

Ինչ վերաբերում է արգելական հրամայականի ձևերին, գրական արևմտահայերենը պահպանել է միջին հայերենի՝ գրաբարից եկող տիպը, ինչպես՝ մի՛ լսեր, մի՛ լսէր, մի՛ սորվիլ, մի՛ սորվիք, մի՛ կարդար, մի՛ կարդաք, մի՛ հեռանար, մի՛ հեռանաք և այլն²⁷:

Գրական արևելահայերենում միջին հայերենի բուն և արգելական հրամայականների ձևերը, ի տարրերություն արևմտահայերենի, ենթարկվել են համարանական նորանոր փոփոխությունների, ընդ որում միջին հայերենից եկող գուգածնություններին երբեմն ավելացել են նորերը: Իհարկե, պետք է նշել, որ սրանից մի քանի տասնամյակ առաջ առկա այդ խայտաբղդես վիճակն այժմ գնալով միօրինականում է, և մի շարք գուգածնություններ վերացման նախաշեմին են գտնվում: Բայց ավելի լավ է նախ տեսնենք, թե քերականական աշխատություններում բուն և արգելական հրամայականների

²⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 362-363, 405:

²⁶ Տե՛ս Ա. Վյուրնյան, նշվ. աշխ., էջ 56-59, 63-64, 89-90, Ա. Սաքավետոյան, Արևմտահայերենի դասագիրք, Եր., 2006, էջ 160:

²⁷ Տե՛ս Ա. Վյուրնյան, նշվ. աշխ., էջ 84, Ա. Սաքավետոյան, նշվ. աշխ., էջ 162:

ինչպիսի ծևեր են նշվում ժամանակակից հայերենի համար: Հ. Քարսեղյանը համապատասխանաբար տալիս է բուն և արգելական հրամայականների ծևերի հետևյալ տիպերը. **Ասդել-Ասդիք-Ասդեցեք**, **խաղալ-խաղա**, **խաղացեք**, **իջնել-իջիք**, **իջեք**, **փախել-փախիք**, **փախեք**, **իմանալ-իմացիք**, **իմացեք**, **մողեցնել-մողեցրու**, **մողեցրեք**, **մի՛ զրիք-մի՛ զրեք**, **մի՛ կարդամի՛ կարդաք**, **մի՛ փախչիք-մի՛ փախչեք**, **մի՛ մկնիք-մի՛ մկնեք**, **մի՛ մողեցնամի՛ մողեցնաք**, **մի՛ վախեցնիք-մի՛ վախեցնեք** և այլն: Բայց միևնույն ժամանակ նա նշում է, որ մի կողմից **բռեք**, **գրեք** ծևերի նմանողությամբ հաճախ գրեցեք, **սիրեցեք** ճիշտ ծևերի փոխարեն սխալմամբ ասում և գրում են՝ **զրեք**, **սիրեք**, մյուս կողմից՝ **զրիք-մի՛ զրիք**, **կարդա-մի՛ կարդա** ծևերի նմանողությամբ ննացած տիպի բայերի համար ևս բուն հրամայականից արգելականի ծևեր են կազմվում²⁸:

Ընդհանուր առմամբ, ժամանակակից հայերենի համար բուն և արգելական հրամայականների կազմության նույն տիպերն են ներկայացվում նաև Ս. Աբրահամյանի, Ն. Պառնասյանի և Հ. Օհանյանի կողմից, միայն թե **և** լօդրդության պարզ բայերի արմատական հիմքով **զրեք**, **վազեք** հրամայականի ծևերը ևս (**զրեցեք**, **վազեցեք** և այլն ծևերին զուգահեռ) կանոնավոր են դիտվում²⁹:

Մ. Ասատրյանը ևս տալիս է բուն հրամայականի կազմության նույն ծևերը, բայց մյուս կողմից՝ նշում է, որ արդի հայերենում արգելական հրամայականի ծևերը կազմվում են դրական հրամայականից, իսկ ներկայի հիմքից կազմված արգելական հրամայականի ծևերը վերածվում են հնարանությունների կամ գտնվում են հնարանություններ դառնալու ճանապարհին³⁰:

Այսպիսով, ժամանակակից հայերենում, ինչպես տեսնում ենք, բուն և արգելական հրամայականների (կամ հրամայականի դրական և ժխտական ծևերի) սկզբնական փոխարքերությունը փոխվել է. Երկուսն ել այժմ կազմվում են նոյն հիմքից: Ընդ որում Մ. Աբեղյանը գտնում է, որ վերոհիշյալ փոփոխության համար հիմք է ծառայել պարզ բայերի դեպքում հրամայականի եզակի թվի դրական և ժխտական ծևերի նոյնացումը, ինչպես՝ **կարդա-մի՛ կարդա**, **զրիք-մի՛ զրիք** և այլն³¹: Իսկ ինչպես է առաջացել վերոհիշյալ **կարդա-մի՛ կարդա** և այլն ծևերի նոյնացումը: Մ. Աբեղյանը նշելով, որ **մի՛ կարդա**, **մի՛ զնա** և այլն ծևերը առաջացել են **մի՛ կարդա**, **մի՛ զնալ** և այլն ծևերից, միաժամանակ գտնում է, որ վերջիններս ել առաջացել են **մի՛ կարդա**, **մի՛ զնար** ծևերից՝ **բ՛ր** հնչյունափոխությամբ³²: Սակայն, ինչպես տեսանք, միջին հայերենից եկող **մի՛ կարդա**, **մի՛ զրիք** և այլ ծևերը կազմվել են **մի՛ նասնիկի** և անորոշ դերբայի հարադրությամբ, և միջին

²⁸ Տե՛ս Հ. Քարսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհան տեսություն, Եր., 1953, էջ 208-212, 318-319: (Արգելական հրամայականի վերջին տիպի կազմությունները դիտարկել է դեռևս Ս. Աբեղյանը: Նա դրանք բնորոշում է որպես գրական լեզվի մեջ չընդունված ծևեր: Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 329-330):

²⁹ Տե՛ս Ս. Գ. Աբրահամյան, Ն. Ա. Պառնասյան, Հ. Ա. Օհանյան, Ժամանակակից հայոց լեզվու, հ. II, Եր., 1974, էջ 415-417:

³⁰ Տե՛ս Մ. Ասատրյան, ժամանակակից հայոց լեզվու, Եր., 1983, էջ 353-355:

³¹ Տե՛ս Մ. Աբեղյան, նշվ. աշխ.:

³² Տե՛ս նոյն տեղը:

հայերենում զուգահեռաբար գործառում էին **մի՛ կարդար, մի՛ գրեր** և այլն գրաբարատիպ ձևերի հետ միասին, ընդ որում արգելական հրամայականի այդ տիպերը (կամ դրանց հետագա ձևափոխությունները) հետագայում էլ շարունակում են զուգահեռաբար գործառել նախախորհրդային շրջանի գրական արևելահայերենում, իսկ ժողովրդախոսակցական լեզվում՝ մինչև այժմ³³: Հետևաբար, կարծում ենք, ճիշտ չէր լինի **մի՛ կարդար, մի՛ գնալ** և այլն ձևերը գրաբարատիպ **մի՛ կարդար, մի՛ գնալ** ձևերից առաջացած համարել: Ըստ այդմ, **մի՛ խաղար - մի՛ խաղար, մի՛ վախճանար - մի՛ վախճանար, մի՛ գրիր - մի՛ գրեր** և այլն ձևերը միջին հայերենի արգելական հրամայականի գրաբարատիպ ձևերի շարունակությունն են, իսկ **մի՛ գրի - մի՛ գրի, մի՛ կարդար - մի՛ պարդար, մի՛ հեռանա - մի՛ պարդար** և այլն ձևերը՝ միջին հայերենի **մի՛ գրի - մի՛ պարդար, մի՛ կարդար - մի՛ պարդար** և այլն անորոշ դերբայով հարադրված ձևերի շարունակությունը: Այդպես էլ, կարծում ենք, գրական արևելահայերենի եզակի բայի **մի՛ խաղար, մի՛ հեռանա** ձևերը միջին հայերենի **մի՛ խաղար, մի՛ հեռանալ** ձևերից են առաջացել (լի անկնամբ), իսկ հոգնակի բայի **մի՛ խաղար, մի՛ հեռանար** ձևերը՝ միջին հայերենի գրաբարատիպ ձևերից: Այլ կերպ ասած՝ տեղի է ունեցել երկու տարրեր տիպի կազմությունների համախառնում (կոնտամինացիա): Ինչ վերաբերում է բուն և արգելական հրամայականների փոխհարաբերության վերահմատավորմանը, (**մի՛ խաղար > մի՛ խաղար խաղար**) և այլն ձևերի նույնացումից էլ դեռ ավելի վաղ՝ XV - XVII դդ., համանման կարևոր նախադրյալ էր ստեղծվել **և** լծորդության պարզ բայերից բուն հրամայականի **սիրէր, գրէր** հոգնակի արմատական հիմքով ձևերի առաջացմամբ, ինչպես՝ **սիրէր - մի՛ սիրէր** և այլն: Իսկ հետագայում **մի՛ սիրէր > մի՛ սիրիր** (հմմտ. **մի՛ սիրէր > մի՛ սիրիլ**), **մի՛ խաղար > մի՛ խաղար** (հմմտ. **չեմ խաղար > չեմ խաղար**) և այլն հնչյունափոխությամբ առաջացած ձևերն ավելի պիտի նպաստեին բուն և արգելական հրամայականների մերձեցմանը:

Այսպիսով, բուն և արգելական հրամայականները, որոնք սկզբնապես մինյանցից անկախ կազմություններ են եղել, հայերենի պատմական զարգացման ընթացքում համարանական և հնչյունական զանազան փոփոխությունների հետևանքով որոշ դեպքերում ձևով նույնացել են մինյանց հետ, որն էլ հիմք է ծառայել համարանական ընդհանրացմամբ ժամանակակից հայերենի բոլոր բայերի արգելական հրամայականի ձևերը բուն հրամայականի ձևերից կազմելու համար:

С. Р. АВЕТЯН – Роль аналогии в дальнейшем развитии собственного-го повелительного и запретительно-повелительного древнеармянского языка. — Статья посвящена историческому рассмотрению собственного-го повелительного и запретительно-повелительного в армянском языке. Делается попытка показать, каким образом первоначальное соотношение этих двух типов повелительного, которые в древнеармянском языке были независимыми образованиями, в дальнейшем развитии армянского языка изменилось и в современном армянском языке они образуются от одной и той же глагольной основы. По мнению автора, особенно важную роль при этом сыграла аналогия.

³³Տե՛ս Հ. Բարսեղյան, նշվ. աշխ., էջ 318-319, 209-211: